



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

ԱՐՀԻ. ՍԱՐԳԻՍ ԱՐԲԵՊՍ. ՏԵՐ ԱՐԲԱՀԱՍԵԱՆԻ

(Ծն. Աղեքսանդրապոլ 1868-ին: Վխճ. Հոտմ 1952-ին)

Տարւոյս Յուլիս 4-ին մեղմէ անդարձ մեկնեցաւ ողբ. Գերապայծառ Սարգիս Արբեպս. Տէր Արբա-համեան, սրբութեամբ կնքելով իր կեանքը եւ քահանայական սուրբ ասպարէզի մեծամեծ ար-դիւնքներով: Նա իր աչքերը կը փակէր յաւիտե-նական քաղաքին մէջ՝ Ս. Վլասի մօտ, ուր կը բնակէր շուրջ տասնութ տարիներէ ի վեր:

Թէպէտ միշտ քաջառողջ եւ զօրաւոր իր կազմով՝ որպէս զաւակ Կովկասի խիստ եւ ուժեղ կլիմային, սակայն իր կեանքի վերջին երեք ամիսները, խոր-տակուած անողոք կաթուածէ մը, դաժուած մնաց անկողին, ու մարեցաւ այն տխուր օրուան վեր-ջալոյսին՝ աչքերը բանալու համար անանց կեանքի երանութեան մէջ, որ պահուած է իրեն պէս ան-վիանդ հաւատքով եւ յոյսով զինուած հոգիներուն:

Բայց եւ ըսենք՝ մեռաւ անձուկ կարօտ մը սըր-տին. կարօտ իր սիրելի Կովկասին, ուր նա ծնած էր եւ անցուցած իր կեանքի ծիծաղկոտ դարունը, եւ յետ Հոտմի մէջ կատարելու իր եկեղեցական ասպարէզի բարձր ուսումները, վերադարձած էր ու գործած որպէս եռանդուն եւ անձնուէր հովիւ եւ առաջնորդ՝ շուրջ քառորդ դար: Երկար սպասեց եթէ ոչ հոն վերադառնալու, սակայն դէթ աղա-տութեան արշալոյսն ողջունելու եւ տեսնելու վե-րածնունդը կրօնական ու բարոյական:

Ողբացեալը ծնած էր Շիրակի Աղեքսանդրապոլ քաղաքը 1868-ին, քահանայական ընտանիքի ըոյ-նին մէջ: Արդարեւ քահանայ իր պապը, քահա-նայ իր հայրը, եւ հուսկ քահանայական ասպա-րէզը մտնող ծաղիկ հասակին երկինք թռած իր սրբակեաց երէց եղբայրը՝ Եղիսէ (Ստեփան), Ս. Ղազարի մէջ 1890-ին:

Գերպ. Սարգիս 1894-ին քահանայ ձեռնադրուած կը սկսէր իր առաքելական կեանքը, հետզհետէ հովուելով Կովկասի հայաշատ կեդրոններուն մէջ, ինչպէս Պաթում, Արտանուշ, Արդուին, Թիֆլիս եւ Ախալցխա:

Յետ համառօտ շրջանի մէջ վարելու Հոտմի Լե-ւոնեան Հայ կղերանոցին մէջ Օդեսական Մեծա-ւորի պաշտօնը, 1906-ին Ս. Աթոռին կողմէ կը կարգուէր Հոգեւոր վարիչ Անդրկովկասի Հայ Կաթողիկէ հասարակութեան, ընտրելով իրեն ա-ռաջին պաշտօնատեղի՝ Ախալցխան: Երեք տարի վերջ Ս. Աթոռին եւ Ռուս կառավարութեան հա-մաձայնութեամբ եւ վճիռներով Գերպ. Սարգիս կը կարգուէր Առաքելական կառավարիչ Ռուս կայսրութեան սահմաններուն մէջ ապրող բոլոր հայ կաթողիկէներուն. եւ ըստ այնմ իր պաշտօ-նատեղին կը դարձնէր Թիֆլիսը:

Իսկապէս հայկական մեծագոյն թեմ մը եւ վար-չութիւն՝ որ իր իշխանութեան տակ ունէր աւելի քան 62,000 հաւատացեալ 150-ի չափ քահանանե-րով եւ 86 եկեղեցիներով ու մատուռներով:

Ողբ. Հանդուցեալը որ իր բարձր եւ կարեւոր պաշտօնը կատարեց մեծ եռանդով եւ անձնուիրու-թեամբ 1906-էն 1917՝ մեծ յեղափոխութեան տա-րին, իրեն մտերիմ օժանդակ եւ անձնուէր դոր-ծակից ունեցաւ Միխայիլեան Միարանութեան միարաններէն լեզուազէտ եւ առաքելական ոգով լի Հ. Դիոնիսիոս Վ. Գաղատուեան, որ դեռ գոր-ծունեայ եւ առողջ հասակին մէջ մեռաւ (1931 Յունիս 23) Թիֆլիսի մէջ, երբ այնքան կարեւոր էր իր գործունէութիւնը փափուկ եւ զթուարին ժամանակին մէջ:

Ռուսական յեղափոխութեան յորձանքէն հալած-ուած Գերպ. Սարգիս, սրտի ցաւով եւ արցունքով թողուց իր Հովուական պաշտօնը եւ եկաւ Հոտմ, ուսկից դեռ որքան կրնար նպաստեց երկար տա-րիներ իր սիրած հօտին եւ վարչութեան գործե-րուն:

1921-ին կարգուեցաւ մեծաւոր եւ վարիչ Լեւո-նեան Հայ կղերանոցին, պաշտօն գոր մեծ ձեռն-հասութեամբ, խնամքով եւ դուրգութեամբով կա-տարեց շուրջ 12 տարի (1921-1932):


1932-ին նշանակուեցաւ Հայ Կաթ. Պատրիարքու-թեան Գործակալ Ս. Աթոռին մօտ, եւ միանգա-մայն մատակարար Ս. Վլասի հիւրանոցին եւ կալ-ուածին:

1933-ին կը ձեռնադրուէր եպիսկոպոս եւ յետոյ կը նշանակուէր Ձեռնադրիչ Հոտմի Հայ կաթողիկէ կղերին, 1938-ին բարձրանալով արքեպիսկոպոսու-թեան պատուին:

Հանդուցեալը հմուտ էր հայկական եկեղեցւոյ շարականներուն եւ աւանդական տաղերուն՝ զորս կ'երգէր իր մեղմ եւ անոյշ ձայնով եւ յաջորդնե-րուն կ'աւանդէր բերանացի:

Կը թողու դրական համեստ վաստակ մըն ալ կրօնական-բարոյական երկու հատորներու՝ զորս իտալերէնէ թարգմանած է, «Նոր դանձ» եւ «Հան-դերձեալն ու զարմանալի զիւտեր», (երկուքն ալ լոյս տեսած Ս. Ղազարի տպարանէն):

Իր մեծագոյն վաստակը առաքելական կեանքն է իր մեծազոյն վաստակը առաքելական կեանքն է ուրի: Որուն վրայ պէտք է աւելցնենք իր յատուկ ջանքերը որոնց շնորհիւ ընտրած ու եկեղեցական ասպարէզին նուիրած է ընտիր հայ պատանիներ, իրեն առաքեալներ Հայ Կաթ. եկեղեցւոյ, որոնք Հոտմի կղերանոցին, Վենետիկի եւ Վիեննայի Մը-խիթարեան վանքերուն մէջ պատրաստուեցան: Այդ բազմաթիւ ընտանիքէն կը ծնենք յատկապէս Գերպ. Սահակ Կողեան Եպս. եւ մանաւանդ Հո-գեւոր Տէր եւ Վսեմ. Կարգիւնալ Գրիգոր Պետրոս ժե. Աղաճանեան Հայ Կաթողիկէ Պատրիարքը, որ



ամենամեծ ուրախութիւնն էր եւ պարծանքը հան-դուցեալին:

Ողբացեալին յուզարկաւորութիւնը տեղի կ'ունե-նար Ս. Վլաս եկեղեցւոյն մէջ, ներկայութեամբ հայ եւ օտարազգի բազմաթիւ եկեղեցականներու՝ եպիսկոպոսներու, քահանաներու եւ կրօնաւորնե-րու եւ Հոտմի Հայ մայրապետներուն: Ու նա կ'երթար հանդէսելու Հոտմի գերեզմանոցը, այն չիրմին մէջ՝ զոր տաանակ տարիներ առաջ ան-ձամբ պատրաստել տուած էր եւ քանդակած իր տապանազիրը:

Մինչ կը խոնարհինք իր թարմ յիշատակին եւ յաւիտենական երանութիւն կը մաղթենք իր սըր-բաւէր հոգւոյն, վստահ ենք թէ երկար եւ ուժգին բաւէր հոգւոյն, վստահ ենք թէ երկար եւ ուժգին պիտի ըլլայ իր աղօթքը իր սիրած հօտին ու հա-մօրէն ազգին հոգեւոր եւ ժամանակաւոր բարօրու-թեան համար:

Հ. Ն. Փ.